# ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖ

## ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ

### ԱՇԽԱՐՀԻՍ ԷՆ ՀԶՕՐԸ ԵՒ ԷՆ ԿԱՐԵՒՈՐԸ

ՀԻՄՆՈՒԱԾ 1843 ԻՆ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. Ա. ՄԱՔ ԳԷՕՐՏԻ

| | |
|---|---|
| ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | 1,828,000,000 Ֆրանգ. |
| ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ | 6,443,000,000 Ֆրանգ. |
| 100 0/0 ԲԱՇԽՈՒԱԾ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ | 541,000,000 Ֆրանգ. |

Կարելի չէ թաղդատութեան դնել ուրիշ ոեւէ ընկերութեան պայմանները ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖԻ ընծայած նոյնպէս առաւելութիւններուն հետ. Բացի կեանքի բազմատեսակ ու նոյն իսկ ռահվառատ ապահովագրական ձեւերէն, այր եւ կնոջ միանգամայն, ինչպէս նաեւ տղոց ու ցմահ եկամուտի վերաբերեալ անմրցելիօրէն նպաստաւոր քօլիսներ կը տրուին. Իրեն զուտ փոխադարձ ու համազգային ընկերութիւն, ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖԻ պայմանները ստուգիւ զերծ ներ են. վերոգրեալ թուանշանները արդէն շատ պերճախօս են. Պէտք չէ ապահովագրուիլ առանց քննելու ԼԱ ՄԻՒՉՈՒԱԼ ԼԱՅՖԻ շահաւէտ ու ամենաւեղ անկասկածօրէն հաստատ պայմանները.

Ընդհանուր Գործակալ Եգիպտոսի, Կիպրոսի եւ Պաղեստինի — ՆԻՔՕԼԱ ԲԻՐՔԻՍ

Փոխ-Ընդհանուր Գործակալ Եգիպտոսի — ՕՀԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

16 Շարա Կալալ, (Թէվֆիքիէ) Մեյխանեան փապրիքայի կարգը՝ Աւստրիական Հիւպատոսարանի դէմ. Գահիրէ (Եգիպտոս)

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԸ՝ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ Է.

Շրջականերու համար ջըպատուաւոր եւ ձեռներէց գործակալներ կը փնտռուին. Դիմել՝ փոխ-Ընդհանուր Գործակալութեան.

---

# ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՅՑԻՉ Ժ. ՆԱՑԼԻՆԿԵՐ

Գավաքի փողոց. Խաչնէտարի սիփականութիւն, Պրիսթոլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐՆերն են եւ աստնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է.

400 է աւելի վկայականներով եւ մետալներով վարձատրուած. Եռաշխաւորեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդէսին մէջ ստացած է.

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Ա. ԽՏԻՎԻԱՆԻ ՅԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐԻ յատկանշին.

Ձրի դասեր և Նորոգու. թիւններ, ՍԻՆԿԸՐ մեքենաներու համար, յաճախորդաց տուներուն մէջ.

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու եւ Նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

---

## ՇԱՊԿԱԳՈՐԾ

ԳՐԻԳՈՐ Մ. ԳԱՅԾԵՐԵԱՆ

Շարա Մուհամմէտ Ալիի «կէպըը»

Խաչատուրեան եղբարց Դեղատանին մօտ

Երկար տարիներ փորձ վարպետներու քով աշակերտելով, վերջերս ալ շապկագործ հանրածանօթ Տիար Հ. Փափազեանի քով չորս տարիներ աշխատած ու ստացած է արհեստին հմտութիւնը, և ուսումնասիրած բոլոր նրբութիւնները.

Այժմ մասնաւոր աշխատանոց մը բացած է Շարա Մուհամմէտ Ալիի «կէպըը» և պատրաստ ունի ու մասնաւոր չափի վրայ կը պատրաստէ շապիկներ, անդրավարտիքներ, գիշերնոցներ, շապիկներու օձիքներ (ֆօգոլ) և թևնոցներ.

Շապիկի նորոգութիւններ ամենամեծ խնամքով.

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ.

---

## ԱԱԽԸՆ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀՐԴԵՀԻ ԴԷՄ

Հիմնուած 1825 ին

| | |
|---|---|
| ԴՐԱՄԱԳԼՈՒԽ | 11,250,000 ՖՐ. |
| ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ | 20,370,000 » |
| ԳԱՆՁՈՒԱԾ ԱՊԱՀՈՎԱԳԻՆ 1901 ԻՆ | 15,940,000 » |

ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, Էլս-լա-Շարել (Գերմ.)

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, Տր. Բաւեւր

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹ. ԳԱՀԻՐԷԻ, ՕՀԱՆԵԱՆ և ԸՆԿ.

16, Շարա Կալալ (Թէվֆիքիյէ) Գահիրէ

---

## ՄԱՆԿԱԲԱՐՁ

## ՏԻԿԻՆ ՄԱՐԻՑԱ ՓԱՓԱԶԵԱՆ

Եգիպտական Կառավարութենէն վըկայական ստացած՝ Տիկին Մարիցա Փափազեան կը ծանուցանէ թէ՝ երկար տարիներու փորձառութիւն ստանալէ վերջ, տարիէ մը ի վեր Եգիպտոս հաստատուած է և իբ մանկաբարձի արհեստը ի գործ դնել կ'ուզէ.

Իրեն փորձառութենէն օգտուիլ ուզողները, կրնան դիմել Ապտին Շարա Պօսթան թիւ 29 տունը.

Աղքատաց համար ձրի գործածում.

---

## ԳՈՂ ՄԺՏՕ

Տամներկու ու կէս ֆորմայէ բաղկացած այս հատորը, որ Աղէքսանդրիոյ «Աւ.

րաքս» տպարանին մէջ հրատարակուած է, կը վաճառուի տեղական բոլոր հայ Խմբագրութեանց քով. Հասոյթը պիտի յատկանայ հայ որբերու.

Գինն է Երկու Ֆրանք.

---

# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

# ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(PAPETERIE CENTRALE)

Նախորդ երկու թիւերով ծանուցուած «Ե. Թորոսեան և Ընկ.» անուամբ նոր հաստատելի թղթավաճառատունը, իր գործունէութիւնները սկսած ըլլալով, ասկէ վերջ պիտի կոչուի «Կեդրոնական Թղթավաճառատուն» անունով.

Իր տեղն է Մանսուրա բաշա, Թրամվէյի գծին վրայ Նարտիկասոց Գաֆէ տը-լա-պուրսի քասաժին մէջ.

Այժմէն կը յայտարարենք մեր յարգելի ազգայնոց թէ, նոյն թուականէն սկսեալ մեր նոր սկսած ճիւղին վերաբերեալ ապսպրանքները փութով և խնամով պիտի կատարուին դիւրամատչելի պայմաններով, ատանց ապառիկի.

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ և ԸՆԿ.

---

## ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Արշալոյս»ի Խմբագրութեան քով կը գտնուին հետեւեալ ծախու գիրքերը.

1. Չորս տարուան հաւաքածոյ «Արշալոյս»ներու. Գին դահ. ոսկ. — 240
2. Ցաւերգ Հայրենեաց (Թղթակ.) — 10
3. Ազգային Սահմանադրութիւն — 12
4. Սասուն և Զէյթուն » — 10
5. Գող Մժտօ » — 8
7. Զուարճալի անեկդոտներ և ժողովրդական վէպիկներ — 5
6. Հիւծախտի դարմանման ամենայաջող միջոցը » — 3
8. Ժամբորդութիւն ի Զուիցերիա — 3

---

## ԼԻԹՕԳՐԱՖ

Եւրոպային մի դիմէք. Ձեր սիկարէթի տուփերուն, էթիքէթներուն և այլ լիթօկրաֆի վերաբերեալ ամէն տեսակ գործեաց համար, (բացի սիկարայի թուղթերէ.)

Պ. Ս. Քիրիշճեան, յայտնի վիմագիրը, իր բացառիկ ժամանակութիւնը խոստացած է Ե. Թորոսեան և Ընկերութեան՝ որ վիմագրական գործոց զանազան ճիւղերուն վերաբերեալ ամէն տեսակ և ամէն լեզուէ այցեքարտեր, հարսանեկան հրաւիրագրեր և ծանուցման թուղթեր ևլն. ևլն. պիտի պատրաստէ յանձնարարութեանց համաձայն.

Գոհացնելու պայմանաւ և դիւրամատչելի.

Դիմել՝

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ.

---

## ԳՈՒՆԱՒՈՐ ՔԱՐՏԷԶ ԵԳԻՊՏՈՍԻ

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Ռ. Ն. ՏԷՆԿԻՆԵԱՆԷ

Ի ԳԱՀԻՐԷ

Սոյն գեղեցիկ Քարտէզը կը գտնուի նաև «Արշալոյսի Խմբագրութեան քով.

---

## ԱԶԳԱՊԵՏԵԱՆ ՔՈՅՐԵՐ

Աքըլիէ Սեղմիրանի և Կօսինեռու

Շարա Ապտիւլ Ազիզ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց թիւ 20.

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ՉԱՓԱՒՈՐ